

Հաստատված է  
ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի  
2015 թ. դեկտեմբերի 26-ի նիստում  
ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի նախագահ  
Ս. Ա. Առաքելյան

## Կ Ա Ն Ո Ն Ա Կ Ա Ր Գ

### «ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԻԶԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ՏՆՕՐԵՆՈՒԹՅԱՆ

#### *1. Ընդհանուր դրույթներ*

- 1.1. Սույն կանոնակարգը սահմանում է «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի (այսուհետ՝ ԵՊՀ ԻՄ) տնօրենության (այսուհետ՝ տնօրենության) կարգավիճակը, իրավասությունները, տնօրենության նիստերի նախապատրաստման և անցկացման ընթացակարգը:
- 1.2. Սույն կանոնակարգը մշակվել է ԵՊՀ ԻՄ կանոնադրության 32-րդ կետի հիման վրա:

#### *2. Տնօրենության կարգավիճակը և իրավասությունները*

- 2.1. ԵՊՀ ԻՄ տնօրենությունը տնօրենին առընթեր խորհրդակցական մարմին է, որը գիտական խորհրդի նիստերի միջև ընկած ժամանակահատվածում քննարկում է մասնաճյուղի գործունեության ոլորտներին վերաբերող հարցեր:
- 2.2. Տնօրենությունը՝
  - 2.2.1. քննարկում, պարզաբանում և կազմակերպում է վերադաս մարմինների, գիտական խորհրդի որոշումների իրականացման եղանակները և միջոցները, վերահսկում է դրանց կատարման ընթացքը,

- 2.2.2. քննարկում, մշակում և նախապատրաստում է վերադաս մարմինների և խորհուրդների քննարկմանը ներկայացվող նյութերը,
  - 2.2.3. անհրաժեշտության դեպքում հանդես է գալիս մասնաճյուղի կոլեկտիվի շահերը ներկայացնող լիազորություններով,
  - 2.2.4. հաշվետու է համալսարանի ռեկտորի, վերադաս խորհուրդների առջև՝ սահմանված կարգով տնօրենի կողմից տրվող հաշվետվությունների ձևով:
- 2.3. Տնօրենության քննարկումները հաշվի են առնվում տնօրենի որոշումները կայացնելիս, որոնք ձևակերպվում են հրամանով:

### ***3. Տնօրենության կազմը***

- 3.1. Տնօրենության կազմում ընդգրկվում են տնօրենը, փոխտնօրենը, մասնաճյուղի գիտական քարտուղարը, ֆակուլտետների ղեկանները, գլխավոր հաշվապահը, արհիվորային նախագահը, վարչությունների պետերը և տնօրենության քարտուղարը:
- 3.2. Տնօրենի որոշմամբ տնօրենության կազմում կարող են ընդգրկվել նաև առանձին ստորաբաժանումների ղեկավարներ և ներկայացուցիչներ:
- 3.3. Տնօրենի որոշմամբ տնօրենության նիստերին խորհրդակցական ձայնի իրավունքով մշտական կամ ժամանակավոր հիմունքներով կարող են հրավիրվել համապատասխան կարգավիճակ և որակավորում ունեցող մասնագետներ:
- 3.4. Տնօրենության կազմը հաստատվում է տնօրենի հրամանով:

### ***4. Տնօրենության աշխատակարգը***

- 4.1. Տնօրենության նիստերը տեղի են ունենում տասնհինգ օրը մեկ անգամ:
- 4.2. Անհրաժեշտության դեպքում տնօրենի որոշմամբ կարող են կազմակերպվել տնօրենության արտահերթ նիստեր:
- 4.3. Տնօրենության նիստերը նախագահում է տնօրենը:
- 4.4. Տնօրենը, բացելով նիստը, հայտարարում է օրակարգը, սահմանում օրակարգի հարցերի քննարկման ընթացակարգը և հաջորդականությունը:

## ***5. Տնօրենության որոշումները***

- 5.1. Տնօրենությունում որոշումներն ընդունվում են ձայների պարզ մեծամասնությամբ, բաց քվեակությամբ:
- 5.2. Տնօրենության որոշումներն ունեն խորհրդատվական բնույթ և կարող են հիմք հանդիսանալ տնօրենի հրամանների համար:

## ***6.Տնօրենության նիստերի արձանագրումը***

- 6.1. Տնօրենության նիստերը արձանագրում է տնօրենության քարտուղարը:
- 6.2. Տնօրենության նիստերի արձանագրության մեջ նշվում են նիստի անցկացման ամսաթիվը, նիստին ներկա անդամների պաշտոնները, անուն ազգանունները, նիստի օրակարգը, քննարկյալ համառոտ ընթացքը, օրակարգի հարցերի վերաբերյալ ընդունված որոշումները:
- 6.3. Տնօրենության նիստերի արձանագրությունները ստորագրում են տնօրենը և տնօրենության քարտուղարը:

## ***7.Կանոնակարգի հաստատումը և նրանում փոփոխությունների իրականացումը***

- 7.1. Տնօրենության կանոնակարգը հաստատում է ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը:
- 7.2. Կանոնակարգում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել մասնաճյուղի գիտական խորհրդի որոշմամբ.
  - 7.2.1 տնօրենի,
  - 7.2.2 գիտական խորհրդի անդամների,
  - 7.2.3 որակի կառավարման հանձնաժողովի առաջարկությամբ: